

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր գիտութիւն.— ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Լինելը յիշող. Հայուհեաց բարեգործական ընկե-
րութեան տասնամեակը. Նամակ խմբագրին. Նա-
մակ խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Խօսքի մարտահրաշխանութիւնը. Արտաքին
լուրեր.— ՀՆՈՒԱԳԻՒՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համապարտութեան
կան նկատողութիւններ:

ԸՆԴԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓԸ

Անցեալ 1891 թվի մայիսի 1-ին, ուղիղ
մի տարի արանից առաջ, Ամերիկայի բոլոր
պետութիւնները վճիռ կայացրին թէ իրար
մէջ եղած բոլոր տարաձայնութիւնները
այսուհետեւ կը լուծուին ոչ թէ պատերազ-
մով, այլ միջազգային միջնորդ զատաստա-
նով: Խաղաղութեան այդ յայտնութիւնը
հետեանք է վաշխագրութեան 1890 թվին
կայացած ամերիկեան միջազգային կոնգրէ-
սի:

Մշտական խաղաղութեան այդ պաշտո-
նական յայտնութիւնը ներգործութիւն ու-
նեցաւ և եւրոպայի հասարակաց կարծիքի
վրա: Սկսեցին հրատարակել բազմաթիւ
գրութեան, որոնք ջանում են ընթերցողին
զգուշացնել ներքին զէպի պատերազմը և
արեւմտահեղութիւնը: Հրատարակվում են
յօդաւածներ, բրոշիւրներ և բովանդակ, ո-
րոնք նպատակ ունեն ցոյց տալ թէ պատե-
րազմը, ինքն ըստ ինքեան, հակառակ է
քրիստոնէական գաղափարներին: Քրիստոնէ-
ական սէրը չէ թող տալիս պատերազմի, չար-
չարել մարդուն, իսկ պետութիւնները
հարաւոր են դնում սպանել պատերազմ-
ների յարուցանել քրիստոնէաց ազգերի մէջ:

Պատերազմի դադարի դէմ բողոքող
գրութեան թիւում ամենից շատ իր վրա
ուշադրութիւն դարձրեց կոմունիստ Բերթա
Ֆոն-Սուստերի «Die Waffen nieder» գեր-
մաներէն լեզուով գրված բովանդակ, որը իր
ընդ տեսանկյուն պէս թարգմանվեց եւրոպա-
կան բոլոր լեզուներով և ահագին աղմուկ
հանց եւրոպայում:

Այդ բովանդակ վրա ուշադրութիւն դարձ-
րին նոյն իսկ քաղաքական շրջաններում և
աւստրիական պարլամենտի նիստերից մե-
նում: Ֆրանսիական միսիստր Կոմանսկի իր
արտասանած ատենաբանութեան մէջ, դե-
մեկով պարլամենտի անդամներին, ասեց.
«Խնդրում եմ ձեզ մի քանի ժամ նուիրել
այդ գրութեան ընթերցանութեան և եթէ
ձեզանց մէջն անգամ գիրքը կարդալուց
յետոյ, կը պահպանէ համակրութիւն դէպի
պատերազմը».— այդ տեսակ մարդու մասին
ես կը ցանւմ միայն:

Եւ իրաւ, տիկին Ֆոն-Սուստերի գիրքը,
որը լի է փաստերով, որը հիմնված է ճիշդ
գիտողութիւնների վրա, ընթերցողին կա-
տարեալ զգուշացնէ ներքին զէպի պա-
տերազմը:

Ահա մի քանի նշանաւոր տողեր վերջի-
շեալ բովանդակ. «Մասնաւոր անձանց մէջ
ուրախանալ իր նմանների դժբաղդութեան
մասին, երբ այդ դժբաղդութեան շնորհով
մարդս կարողանում է ձեռք բերել նիւթա-
կան կարողութիւն, համարվում է մի
անազնիւ և ստոր գազացմունք: Իսկ ազգը և
պետութիւնը հպարտ են լինում և փառա-
ւորվում են այն զգացմունքով որ թէ և հա-
զարներ կործանվել են, հազարներ քանդվել
են, բայց պետութեան երկրներն ընդար-
ձակվել են, պետութեան ոյժն աւելացել է:
Եւ այդ տեսակ կործանիչ պատերազմը ան-
լանվում է ա ջ ո ղ պատերազմի, որի հա-
մար յաղթողը գոհացողական մաղթանքներ
է անում Աստուծոյն»:

Պատերազմի և միլիտարիզմի դէմ բողոք-
ները հետզհետեւ աւելանում են քաղաքա-
կիրթ երկրներում: Նախ բողոքում էր պա-
տերազմի սարսափների դէմ միմյան ժողո-
վուրդը, աբիսինյան, սակայն հետզհետեւ սկը-
սեցին բողոքել դրա դէմ և ինտելիգենցիան
և ժողովրդի ներկայացուցիչները, պարա-
մենտների պատգամաւորները:

Մի միջազգային կոնֆերենցիա ամբողջ
քաղաքակիրթ աշխարհում խաղաղութիւն
հաստատելու, միլիտարիզմը վերջնելու և
զօրքերը զինաթափ անելու համար՝ նա-
նակված է եկող 1893 թվին Ամերիկայի
ճիւղագո քաղաքում կայանալի համաշխար-
հային ցուցահանդէսի ժամանակ:

Երբ լուսաւորված երկրներն բոլոր դըպ-
րոցներում, պատմութիւն աւանդելիս, այլ
ևս չեն ընտելացնի մանուկ սերունդը հիաց-
մամբ և ոգեւորութեամբ վերաբերվել դէպի
պատերազմները, դէպի մարդկային կոտորած-
ները, երբ նոր սերունդը հետզհետեւ կը
սկսի զգուշանալով վերաբերվել դէպի հակա-
քրիստոնէական, եղբայրասպան գործողու-
թիւնը, որը պատերազմ փառաւոր ա-
նուն է կրում, այնուհետեւ կը դառնա ժամա-
նակ, երբ ապագայ ճշմարիտ լուսաւորված
մարդկութիւնը նոյնչափ զգուշանալով և սար-
սափով կը յիշէ պատերազմը, որչափ մեր
այժմեան սերունդները զգուշանալով և սար-
սափով յիշում են հնադարեան բարբարոսու-
թիւնների, միջնադարեան ինկվիզիցիայի և
ստրկութեան ժամանակները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԻՆԵՆՔ ՅԻՇՈՂ

Աղուէններն որչ և երկնքի թռչուններն բոց
կայ, բայց մարդու որդուն տեղ, ուր նա իր
զուգը դնէ, չը կայ:

Այդ էր ասում Նա, որ ինքը մի հացով հաղարա-
ւորներն էր կերակրում և իր հետևողներն բազմա-
թիւ օթեաններ էր խոտաւորում աւելի լաւ կեանքում:
Գլուխը դնելու տեղ չունենալով ամենամեծ
պարծնքը և ամենաթանկ արծիքն է եղել այն
անձինքներն, որոնք իրանք մի աշխարհ փրկելու
համար դիչերն անդամ հաւասար ցերեկի անքուն
են անցկացրել. և երբ նրանք իրանց մօրէ քու-
րայի մէջ մի լաւագոյն աշխարհի կաղապարն են
ձուլել, մի օր էլ դարձել և իրանց վրա են նայել
և տեսել են, որ իրանք մի տեղ էլ է չունեն, ուր
իրանց զուգը դնին:

Ամերիկեան տանջված գլուխը իր հանգիստը
ստորձանակի մի հարուածի մէջ է գտնում: Աշ-
խարհաբար Աղաւման, անձարակ միացած, երբ
ծիւղվում էր մաշող ցաւից այն հրաշալի գործիքը
— կոկորդ, որից թռած բաւերը զգացմունքների
ծովին էին յուզում սրտերի մէջ, միջոց չունէր
այդ սրտնչիւր գործիքը ցաւից ազատելու դարմա-
նումը գտնելու և վաղժամ հանգչում էր հանձա-
րը կարողութեան մասին վրա: Եւ Բաֆայել Պատ-
կանեան այսօր օրապահիկն է կարօտ:

Ահա մի ուրիշը: Աշխարհը արան լաւ է ճա-
նաչում, մեր կովկասի որդիներում, ուր ու-
սումնարան կայ և ուր կարգապահում է գիրքը
ժողովրդի մէջ, նրա անունն արտասանելիս լսողը
հաղիւ թէ կարօտ լինի հարցնելով իմանալու թէ
սկ է նա: Ուսուցիչը, որի ձեռքի տակ մանուկ
աշխարհը իր մարմնի լեզուն է թոթովել հեշտու-
թեամբ և թոթովում է, որի ճիշտ տակ նա իր
մայրենի երկրի երան է լսել, զրացել և երգել.
վկայասան և զրուցազորող, որի պատմածի հիւթը
ժիր մանկուտ համար այն է եղել ճիշդ, ինչ որ
ծաղիկը մեղուի համար. բանաստեղծ-աշուղ, որ
վառել է երկակայութիւնը, ջերմացրել է սիրտը
և շարժել է ձեռքը դէպի փրկաբար արհեստ աշ-
խատանքի, դէպի քրտնքի առաքնութիւնը, որ
առաջին գոհաստեղի դիւցազնութիւնն է. հրա-
պարակաստ, օգտակար գիտելիքների և ընթեր-
ցանելիքների հեղինակ, թարգման. մի անխնայ
գործող, մի չիտակ մարդ, մի ոգեւորված և ոգեւ-
րող հայրենասէր, ահա նա:

Եւ սակայն նա այսօր մոռացվածի պէս է,
զերել մի անկիւնում նստած, չըջապատված ման-
կահասակ զաւակներով, որոնք ապրուստ, ուսումն
և կեանք են խնդրում այն մարդից, որ ինքն ուս-

ման, ապրուստի և բարեգը կեանքի մի մշակ է
եղել իր հայրենի աշխարհի համար և քաղաքները
լաւ են ճանաչում և յիշում նրան, միայն թէ ա-
նունը տառ:

Այդ այդ մարդը իր զաւակների ապրուստը հո-
գալու, կեանքի մի փոքրիկ շաւղ դնել նրանց
առջև բանալու համար, այսօր հարկադրված է իր
գրաւոր վաստակների գանձը, տքնութիւնների
ամբողջ հաւաքածոնը հրատարակելու իրաւունքը
ընդ միշտ վաճառելու:

Արութիւն և Մանուէլի վկայագիր երգիչը, Ա-
հաճի հեղինակը, Արեգնազանի շարահիւտը,
Տօրը հակայի վկայասանը չը պիտի պէտք ունե-
նար իր որդու ժառանգութիւնը օտարացնելու,
եթէ փոքր ինչ աւտարական ոգի ունենար, իր
վաստակը չահեցնելու արուեստը Նա իր գրքերը
վաճառելու շնորքը բնաւ չունեցաւ:

Ինքն էլ մի ֆեոտօղի, ջաղացական լինելը իր
բանը չէր: Ուստի չախչախ ձայնի տակ անգամ,
կեանքի տարածանքների մէջ, Աղայեանը՝ ձին էլ
կորցրած՝ պիտի կանչէ երգը, պիտի երգէ երգը.
և մահը, երբ մի օր ներս պրծնի նրա մօտ գողի
նման, աղքատութեան կամ քաղցի դիմակի տակ,
դարձեալ պիտի գտնի նրան սեղանի վրա կորացած՝
մի նոր ֆեոտօղի օտեղծիկա:

Ինքանը ասել է.— Յիշողութիւնը իրաքանչիւր
մարդու համար իր բարոյականութեան մասն է.
վնչ նրան ու յիշողութիւն չունի:

Հասարակութիւնների համար յիշողութիւնը,
մանաւանդ երախտագիտական յիշողութիւնը, ա-
ռաքնութեան, ոգու վնասական ճգնաժամ յայտա-
նին է:

Լինելը յիշող և յիշելը մանաւանդ երախտաբար:
Լինելը յիշող և յիշելը մանաւանդ երախտա-
ւորներին:

Մանաւանդ յիշելը նրանց, երբ լսում ենք և
գիտենք թէ նրանք իրանք չըթողնէր դառնա-
թեան բաժակի վրա ունեն:

Բաֆայի յուշարկաւորութեան հանդէսին, երբ
նրա դիւարած կաղաք թաղված էր պատկերի
դէպի տակ և զգացմունքը ծայրացեալ զեղուն
մէջ էին, մեր վկայասաններից մէկը, որ և սա էլ
բաղդի երես տուածներէն չէ, չէջում էր ական-
ջիւ տակ.— կուգէի այս պատկերի գինը տային
ինձ կեանքանութեան օրով քան թէ մահիցս յետ
սրանց բեռն տակ թաղէին ինձ:

Ո՛, ժողովուրդ, մի թողնիք քո երգիչներին ու
վկայասաններին ապրել ու մոռնալ ապախի
տկուր խորհրդածութեան ճշման տակ:

Բո՛ գրած պատկերը, ժողովուրդ, դառն ծաղը
են քո վկայասանների վրա, եթէ նրանք դառնու-
թիւնը կու տալով պիտի փչեն իրանց չունը քո
աչքիդ տակ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատմական Անի մայրաքաղաքը տեսնելուց
յետոյ, ես ցանկանում էի տեսնել խճուղից մե-
նաւորները, որն արեւմտեան Նիւսիւն սիրուն տե-
սարաններից մէկն է: 1891 թվի յուլիսի 20-ին
Անիից ճանապարհ ընկալ դէպի խճուղի:

Անի քաղաքից մինչև խճուղի ընդամենը 40
վերստ է: Համապարհը ձգված է բլուրների, լեռ-
ների և ձորերի միջով: Առաջին գիւղը, որ մենք
պատահեցանք դա ձալան էր: ձալա գիւղը ա-
ռաջ թիւրքաբնակ էր. այստեղ էր հուշակաւոր
Յիսուսի բնակարանը, այստեղ էին ապրում
բոլոր աւաղակները, որոնք թիւրքաց պետութեան
ժամանակ շատ առատ հունձ ունէին, սակայն,
երբ երկրը մոտ քրիստոնէայ իշխանութեան
տակ, ինչպէս շատ թիւրքեր, նոյնպէս ձալացիք չը
կամեցան զեղեկութիւն օրհնելով կառավարել և
դաղթեցին դէպի Փղեր-Ասիայի Սեբաստիա նա-
նազը, իսկ ձալան մնաց աւերակ:

1879 թվին ձալա եկան հայ գիւղացիք զանա-
զան տեղերից և ընտելութիւն հաստատեցին. նը-
րանցից յետոյ եկան Ալեքսանդրօպոլ գաւառի
նասաւոր գիւղից 18 տուն և ձալա գիւղը սկսեց
բազմանալ. այժմ ձալան բաղկացած է 51 տնից:

ձալա գիւղից դէպի հիւսիս գտնվում է Մախա
բերդը, որը շինված է 650 թվին ոմն Մախա ա-
նուն հայ իշխանի ձեռքով: Բերդն այժմ աւե-
րակ է:

Բերդը տեսնելուց յետոյ եկանք Կարմիր գիւղ,
որը պարսկաբնակ մի գիւղ է Ալաւա լեռան ստո-
րութեամբ Ալաւա լեռը լաւ յայտնի եղաւ ան-
ցիւղ 1877—78 թվականին, ուսումնական
պատերազմի ժամանակ, որպէս բնական պնու-
թիւն: Ալաւայի չորհիւ թիւրքերը կարողացան
ուլթ ամրա դնելով ուսուց զօրքի դէմ, և Ալա-
ւային տիրելը ամենամեծ բաղաւաղութիւն էր
համարվում ուսուց բանակի համար:

Ալաւայի ստորոտում գտնվում են Ալեմ և Տաշ-
նիկ պարսիկ գիւղերը, որոնք լաւ ապացոյց են թէ
որքան ողորմելի երկրաբարձներ են այդ թիւրքերը.
նրանց տները, վար ու ցանքը, նիստ ու կացը
ցոյց են տալիս, որ դրանք ոչ թէ երկրաբարձ են,

այլ աւաղակներ:

Դրանց հակառակ շատ սիրուն տեսք ունի Տի-
կոր հայաբնակ գիւղը, որ Անի քաղաքին ժամա-
նակակից է: Ունի մի պատմաւոր եկեղեցի յա-
նուն Ա. Երբորութեան, որ շինված է 903 թվին,
իշխան Սահակ Կամաղարկանի հրամանով և վա-
հան հաղարապետի հսկողութեամբ: Այս եկեղե-
ցու վրա է նաև Աշոտ Ա. Բագրատունի, խոսրով-
անոյ թագուհու արձանագրութիւնը, որ շատ ու-
րիշ արձանագրութիւնների հետ միասին հայր Ղե-
ւոնդ Ալիշան դեռնել է իր «Շիրակ» աշխատու-
թեան մէջ: *)

Տիկոր գիւղը իր սահմաններով հին ժամանակ
սեփականութիւն է եղել իշխան Վեստ Սարգսի,
որը մեր պատմութեան մէջ շատ կեղտոտ անուն
է թողել որպէս դաւաճան:

Այժմ Տիկոր գիւղը բաղկանում է 85 տուն հայ
ժողովուրդից. ունեն երկու քահանայ: Յիշեալ եկե-
ղեցին շատ հին և խաղաղ լինելով, արգելված է
այդտեղ աղօթել, իսկ նորը չունեն. եկեղեցական
արարողութիւնը կատարվում է քաջօղեսայ, տաճա-

*) «Շիրակ» 132—135.

րի կողքին: Այս գիւղում կառավարութեան հրա-
մանով անցեալ 1890 թ. հիմնադրեցին մի շքեղ
արական գիւղական դպրոց: Այս գիւղում է բնա-
կվում դաւառապետի օգնականը, այստեղ է վիճակի
դիւանատունը:

Տիկորում կան բազմաթիւ այգիներ, բանջարա-
նոցներ և սիրուն ծառեր, որ թիւրք գիւղերում
երազում էլ չէք տեսնի:

Անցնելով Տիկոր գիւղի ջրաղանների մօտից,
մենք մտանք մենաստանի սահմանը և մի քանի
բօպէից յետոյ արդէն ս. Լուսաւորիչ եկեղեցու
մօտն էինք:

Խճուղի, կամ խճուղից մենաստանը գտնվում է
Արիօր և Աղարակ գիւղերի մէջտեղ, մի երկար
ձորակի մէջ, որտեղից անցնում է նոյն անունով
մի պարզ գետակ: Խճուղի հնումն անուանվում
էր «Հինգ սուրբ», որովհետեւ այդ ձորակի մէջ
կային չինած հինգ եկեղեցիներ և այդ հինգ ե-
կեղեցիների անունով մենաստանը կոչվում է
Բէշքիլիսա, որ նշանակում է «հինգ եկեղեցի»:

Խճուղի մենաստանը շինված է 10-րդ դարի
սկզբներին. հինգ եկեղեցիներից մէկը՝ ս. Սարգի-

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page, is visible at the bottom of the page.

Մշակման վարձ	200
Երկրագործական գործընկեր	100
Տնտեսի վարձ	50
Գումարը	550

Ծախսը դուրս դալով՝ կը մնայ ամեն տարի
 ուր 450 լավուր:

Այս գումարը անտեսելով, վաճառապրը մտադիր է
 1892 թվի յոթնիս ամսին շինել վեց նոր սե-
 անիներ ուխտաւորների համար վանքի հարաւա-
 նի կողմը, այլ և շինել երկու նոր աւաղաններ
 կը լեռան տակ պաղ աղբիւրի վրա միւսը տաք:
 Եւ աղբղլեց՝ չառ խնայի միայն է, արժմանն սե-
 անիները չառ անցալորսն են ուխտաւորների հա-
 րը. նայեալն աւաղանները պէտք է նորոգեն,
 պէտք զի ուխտաւորները տեսնելով ջրերի վեր-
 րաբը յաւիտութիւնը, սկսեն մեծ թափով լաճակել:
 Վսնըն ունի գեղեցիկ հող և առատ ջուր.
 Երծունեայ մարդ է հարկաւոր, որ միակէլ տայ
 ինց աճաղին եկամուտներ կարող են ստացվի:
 Երակեցի

— — — — 2-րդ — . 103 > 37 >	51/2% վկայակ. գիւղ. հող. բանկի. 104 > 50 >
— — — — 3-րդ — — — — — > — >	41/2% գրասական թղթեր կալուած. — > — >
— — — — 4-րդ — — — — — > — >	փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. . 148 > 25 >
— — — — 5-րդ — — — — — > — >	— — — — — — — — — — — > — >
— — — — 6-րդ — — — — — > — >	Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. — > — >
6% ոսկեայ ընկառ. 157 > 50 >	ընկերութեան օրինակներ. . 101 > 87 >
4% ոսկեայ փոխառութիւն. — > — >	Մոսկուայի քաղաք. օրինակներ. 101 > 50 >
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. — > — >	Օդեսայի — — — — — 102 > 12 >
— — — — 2-րդ — — — — — > — >	Թիֆլիսի — — — — — 98 > 50 >
— — — — 3-րդ — — — — — > — >	Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 101 > 50 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն. 241 > 50 >	— — — — — Գուրմայիսի — — — — — 101 > 50 >
— — — — երկրորդ — — — — — > — >	Ս. Պետերբուրգի քաղաքի արամադրութիւնը — > — >
Պետական երկաթուղային ընկառ. 104 > 25 >	հանդարտ է: — > — >
51/2% ընկառ. — > — >	Ճամնապատ-Խմբագիր՝ Գ. ՏԵՐ-ՄԱՐԿԱՆՍԵԱՆ
4% ներքին փոխառութեան 95 > 37 >	Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ
5% գրաւ. թղթ. աշխ. կալ. բանկի 102 > 12 >	
Ազն. կալ. բանկի խաղարկութեան — > — >	
Գրաւ. թղթ. — — — — — 193 > 75 >	

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Աքտովմա Ալեքսանդր Խոսրովի կալուածների խնամատարը (опекунъ), կալուածների, որոնք գտնվում են Թիֆլիսում և Երևանում (Ջրաբերական և Ջուրի քարվանսարանները) խնդրում է դրանց վարձողներին փող չը վճարել փոխված օպէկուս Նիկոլայ Տէր-Մարգարիտովին և նրանց հաւատարմատար Պետրոս Խոսրովին: (№ 61) Օրբէլեան փողոց, տ. № 4, խնամատար Խ. Խվանով. 1—2

Ա. Մուղղուկի Թախտեանցի դործարանում պատրաստվում են ամենաէժան գներով ամեն տեսակ քարեր լիտոգրաֆիայի համար: Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցեով. Шуга, Типо-литография Мугдусиакоева. 2—4

Լոյս տեսաւ և վաճառվում է Կենտրոնական գրադաճառանոցում Լեւոն Սարգսեանցի ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՐԹԵՐ ՄԵՋԱՆՈՒՄ (I մեր ծխական դպրոցները), գինը 20 կոպ.: (№ 59) 3—3

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԵՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՈՆԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Սիզրանի ասֆալտի դործարանի Բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍԻ ՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ: Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցեով. ԹԻՖԼԻՍ. Ալեքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերնեանովին: ԲԱԹՈՒԹ. Սաղաթայա փողոց, № 3, պ. Սուխանովին: (№ 24) 7—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՀԱՄԱՋԱՍՊ ՕՐԲԵԼԻ
Սոյալականայա փողոց, սեփական տանը №№ 15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 2 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ: (№ 145) 54—150

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ
Թիֆլիս, Սոյալականայա փողոց, տուն Աղաբաբով, Ամանային դործնական հիւստաճքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար:
Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով:
Սարպինկայի գույքաների թիւ, սաղա, գոյնզգոյն: Ներկերը տեղական են:
Սարպինկայի զգեստներ արկղերում 3 ընտրուց սկսած մինչև 60 կոպէկ:
Սարպինկայի իւրեաներ 1 ը. 80 կ. և աւելի թանգ:
Սարպինկայի քթի աղւուներ և գլխի թաշկինակներ:
ՖԱՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
ԲԵՆԴԵՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ
(№ 47) 12—30

НЕМЕЦКАЯ ГОСТИНИЦА
HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ԹՈՒՄ, քաղաքի կենտրոնում: Նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոմէրներ: Որոնց սաղք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ընտրուց օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Դար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընտրան, տեղեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ:
Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 21—130 (2.)

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԵՍԻՈՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.
1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլուխնիսկու մեթոդով և Շէդզերի ֆրանսիական մեթոդով:
2) Կարի դասեր ժողային ժուրնալներով:
3) Հարթակարի և զանազան ձեւադործների դասեր:
4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար:
Վճարը ամսական 2 ընտրուց երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան:
Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձեր: (№ 23) 25—40

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դաստիարակի պատկանող իւրաքանչիւր անձի համարու ՄԱՏՋԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարու-թիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսուցմամբ կարելի է համար:

Ս. ՄԱՆՈՒԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տիկաների լիակատար աղւեսակներով, 1-ից մինչև 10.000 ընտր. համար. 10%-ից մինչև 12% վաճառվում է եղբայր Մովսիսեանների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисе, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Ма-нуэляну:
Գինն է 1 ընտրուց ֆոտի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 97—150 (9—№ 95)

И В. А. ОУЗАНДЖИАН
ՆՕՏԱՅԻՆ ՄԱԳԱՋԻՆ
Գ. ՍՈՒՋԱՆԱՃԵԱՆԻ
Մատակարար (поставщик) Թիֆլիսի բաժնի Ռուսաց Արեւմտեան Կոնսերվատո-րիայի:
Վաճառվում են Կովկասեան եղանակներից:
Կորդանաներ. Նոր բայաթի. Nouveau Bayati.
Հայկական ռապսոդիա, Rhapsodie Arménienne.
Տիգրանեաներ. Կովկասեան եղանակների և պարեր. Frans Kaucaische.
Աֆրիկեաներ. Մայր Արաբի. Պարոնէկեաներ՝ Հալաբ Երանի.
Տէր-Յովսէփեաներ՝ Մանկական երգարան (նոտաներով).
Հայկական Մարշ. Marche Arménienne.
Ծիծեռնակ (նոր փոխադրութիւն) Ципернак.
Նոյնպէս և մեծ քանակութեամբ ամեն տեսակ նոտաների, պիանոյի, ջութակի, ֆլէյտի և այլ գործիքների համար: Բոնայներ, պիանոներ, Շէդզերի և ուրիշ ֆարքիկաների, կան ծախս և վարձով տալու: Չոթաներ, ֆլէյտաներ, ֆիւնտաներ, ֆլէյտի և այլն... Օտարաքաղաքացիների պատուէր-ները կատարվում են խելով:
Գինը հետևեալ հասցեով. Գ. Թիֆլիս, Музыкальный магазинъ Ив. Су-запанджянъ.
№ 53. 5—10

ՇԵՐԻՆԳԻ ՊԵՊՍԻՆ ԷՍՍԷՆՑԻԱ
Գոյաթոր Օսկար Լիբերէլի՝ Բերլինի համալսարանի ֆարմաքո-գիայի պրոֆէսորի ընցեպատով:
SCHERINGS
Grüne—Apotheke Berlin N. Shaussee—Strasse 19
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային մեծ խանութներում:
Միակ պահանջարկ համար՝ Կովկասեան ընկերութեան դեղա-տան ապրանքների վաճառման թիֆլիսում, և բաժանմունքը ԲԱԳՈՒՄ:
(№ 53) 5—10

ԵՂԱ. ԿՐԵՍՏՕՎՆԻԿՕՎՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿ.
ՊԱՀԵՍՏՈՒՄ, ԲԱԳՈՒՄ
Ստացված է ԿՈՎԻ ԻՂԱ, լաւ տեսակի:
Վաճառվում են մեծ քանակութեամբ: Երեքից մինչև 16 պոչ տակառներով:
Հասցէն նամակների համար. Фабрично-торговому товариществу Бр. Крестовниковыхъ, въ Баку.
Հեռագիրների համար. Баку, Крестовниковымъ. (№ 55) 5—8

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ		ԻՐԻՄԵԱՆ	
Կենսագրական տեսութիւն (պատկերով)		Ի. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ	
Գնել կարելի է գրադաճառանոցներում: Գինն է 40 կ. Օտար քաղաքներից դիմել հեղինակին, «Մշակ» խմբագրատուն:		(№ 45) 5—5	
ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ		ԵԼԵԿՏՐՈՆ	
Ուժի հասցնել տարածութեան վրա.		Ուտո սխիսմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օժտում:	
ՏՆԵՑՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.		Գաղի համար — ածուխից,	
Էլեկտրական նշաններ.		— — — նաւթից,	
ՋԱՆԳԱԿՆԵՐ		— — — անալաքիցից,	
ԳԱՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.		— — — կէրօնից	
Էլեկտրոլիւ,		РОСТОВЪ (на Дону)	
Ազոմուլատորներ, էլեմենտներ,		1/2-ից մինչև 120 ձիու ուժի:	
ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.		БР. ГЛѢБОВЫ	
Նախահաշիւներ և ծրագիրներ ձրի-արար.		Շոգեմեքենաներ մեծ արագու-թեան.	
(91—№ 5)		Большая Садовая, 24.	
		68—100 (Կ. շ.)	